Էսսե, Արձակ, Հայ գրականություն

16+

ՄԿՐՏԻՉ ԱՐՄԵՆ

ԳՈՎՔ ԱԳԱՀՈՒԹՅԱՆ

Կա մի բառ մարդկային բառարանում, որով ամենից ավելի ճշգրիտ, ամենից ավելի սպառիչ կարելի էր բնորոշել նրա ամբողջ էությունը — ագահ:

Նա ագահ էր ամեն ինչի նկատմամբ, վճռապես ամեն ինչի: Նա ուզում էր ամեն ինչ գիտենալ, զգալ, տեսնել, ճաշակել, ունենալ, լինել... Եվ այդ ամենը ոչ թե համտես անողի, ստուգողի, ծանոթացողի փոքրիկ դոզաներով, այլ ամենալայն չափերով, ագահորեն…

Դպրոցական հասակում տեղեկանալով, որ երկրի շրջագիծն ընդամենը քառասուն հազար կիլոմետր է, նա շատ էր ափսոսացել, որովհետև պատրաստվում էր շրջել երբևէ ամբողջ աշխարհով և վախենում էր, թե շուտով կսպառի այն:

Նա չէր կարողանում հանգստությամբ ուտել իր պնակում դրված միրգը, որքան էլ որ դա շատ լիներ, եթե նա չտեսներ կամ չիմանար, որ բուֆետում կամ խոհանոցում էլի կա դրանից:

Նա շատակեր չէր և եթե նույնիսկ լիներ էլ, չէր կարողանա ուտել ավելին, քան կարող է մի մարդը: Սակայն սոված ժամանակ նրան թվում էր, թե ուտելիքի ոչ մի քանակ չպիտի դիմանա իր ախորժակի հանդեպ: Ի դեպ, նրա վերաբերյալ սխալ կլինի գործածել «ախորժակ» բառը: Ոչ թե ախորժակ, այլ՝ ագահություն: Եվ եթե ուտելու մեջ, այնուամենայնիվ, շուտով գալիս էր հագեցումը, ապա դա միակ հագեցումն էր նրա կյանքում:

Անկշտությունը տանջալի բան էր, նրա կյանքի միակ, բայց հսկայական տանջանքը: Մի ուրիշ մարդ, ով երբեք բավականություն չի տվել կամ լրիվ կերպով չի տվել իր ցանկություններին, ունի այն համոզումը, որ բավարարություն տալու դեպքում կգա նաև հագուրդը: Իսկ նա ինքը, որ կյանքի տարբեր շրջաններում հնարավորություն էր ունեցել բավականաչափ կերպով, իսկ երբեմն էլ լիուլի կերպով կատարելու իր մի քանի ցանկությունները, արդեն գիտեր փորձով, որ երբեք, ոչ մի բանում, նա չի ունենալու ոչ մի հագուրդ... Նրա պահանջներն ավելի շատ էին, քան հասնում է մի մարդուն: Նրա պահանջներն անսահման էին:

Փոքր հասակում, երբ նա խաղում էր բազմաթիվ երեխաներով լի մեծ բակում, նրան թվում էր, թե կարելի է հասցնել մասնակցելու բակի զանազան մասերում կատարվող բոլոր խաղերին: Որոշ ժամանակ դա նրան կարծես հաջողվում էր, մինչև որ նա գլխի ընկավ, որ դա խաբեություն է: Ենթադրելով, թե նա մասնակցում է բոլոր խաղերին, նա հապճեպ անցնում էր երեխաների մի խմբից մյուսը և փաստորեն չէր մասնակցում ոչ մի խաղի: Դա հասկանալուց հետո նրան պաշարեց իր հնարավորությունների սահմանափակության գիտակցությունը և նա մի անգամ նույնիսկ լաց եղավ զայրույթից:

Նա տանջվում էր անիրագործելի, ֆանտաստիկ մի ցանկությամբ՝ լինել ոչ թե մի մարդ, այլ հազար, կարողանալու համար ապրել հազար կյանքով, միաժամանակ լինել հազար տեղերում, կատարել հազար գործեր... Իսկ հազար թիվը նա վերցրել էր միայն այն պատճառով, որ այն դասարանում, որտեղ նա սովորում էր այն ժամանակ, թվաբանությունն անցնում էին մինչև հազարը և նրան թվում էր, թե չկա դրանից ավելի մեծ թիվ…

Մի քանի տարի հետո, արդեն պատանի հասակում, նրա խենթությունը կարծես թե անցավ և նա սկսեց ավելի լուրջ մտածել իր կրքի՝ ագահության մասին: Այսպես, ուրեմն, առանձին անհատի հնարավորությունները շատ սահմանափակ են — հագուրդ տալու համար նրա բոլոր ցանկություններին, մանավանդ երբ դրանք բազմապատկված են քո ագահության, ավելի ճիշտ՝ անկշտության վրա: Ի՞նչ է մնում անել մարդուն: Կամ բարձրանալ կտուր, կանգնել դրա եզրին, դիտել բակում կատարվող բոլոր խաղերը և երևակայել, թե դու մասնակցում ես դրանց, կամ իջնել կտուրից, ընտրել այդ խաղերից որևէ մեկը և ողջ էությամբ նվիրվել դրան…

Քանի դեռ մարդը փոքր է և հարցը վերաբերում է խաղերին, կարելի է վարվել թե մի կերպ և թե մյուս: Կարելի է մինչև անգամ ընդունել երրորդ որոշում, պարզապես մերժել թե առաջինը և թե երկրորդը, քաշվել մի կողմ, չխաղալ: Այդտեղ ողբերգություն չկա: Բայց ահա նա այլևս փոքր չէ, ավարտել է միջնակարգ դպրոցը և նրա առաջ կտրուկ կանգնած է մասնագիտական որևէ կրթություն ընտրելու անհետաձգելի հարցը…

Ի՞նչ անել: Պարզ է, հետևել իր հակումին: Դա լավ է, երբ մարդ ունի որևէ հակում: Բայց չէ՞ որ կան մարդիկ, որոնք ոչ մի բանի նկատմամբ չունեն առանձնապես շեշտված որևէ հակում: Եվ կան մարդիկ, ինչպես ահա նա ինքը, ովքեր հակված են դեպի ամեն ինչ: Նրանք երազում են դառնալ և՛ ֆիզիկոս, և՛ ըմբիշ, և՛ ջութակահար, և՛ զորավար... Այնքան գրավիչ են դրանք և ուրիշ անթիվ-անհամար մասնագիտություններ, որ անհնար է չտատանվել դրանց բազմության առջև…

Իսկ ընտրել, այնուամենայնիվ, հարկավոր էր, և ընտրել, այնուամենայնիվ, անհնար էր, որովհետև նա վախենում էր, որ ինչ էլ ընտրի՝ շուտով պիտի զղջա դրա համար: Ոչ թե դա ընտրելու համար, այլ մնացյալ ամեն ինչին հրաժեշտ տալու:

Դա նրա համար առավել ևս ցավալի էր այն պատճառով, որ նա, իր հաստատ համոզումով, նույն հաջողությամբ կարող էր դառնալ և՛ մի բան, և՛ մի ուրիշ բան, և՛ երրորդ…

Նրա պատկերացումով, ոչ միայն ինքը, այլև յուրաքանչյուր մարդ ծնվում է ընդունակության մի ինչ-որ քանակով, որը, սակայն, դեռ որոշ ժամանակ չունի որևէ որակ, որևէ բնույթ, չի ստացել կոնկրետ ձև: Դա դեռ պոտենցիա է, որը միայն հետո է կոնկրետանում, հանգամանքների բերումով կամ կամավոր ընտրությամբ: Նախքան այդ կոնկրետացումը մարդը նման է շուկա եկած գնորդի, որն իր գրպանում ունի որոշ քանակով դրամ: Այդ դրամով նա կարող է գնել կամ խնձոր, կամ խաղող, կամ միս, կամ բրինձ, կամ թաշկինակ, կամ ծխախոտ, կամ մի որևէ այլ բան: Քանի դեռ նա չի գնել ոչինչ, ամբողջ շուկան նրա տրամադրության տակ է: Բայց բավական է, որ գնի որևէ բան՝ և շուկան այլևս փակ է նրա համար:

Նա շատ էր սիրում արևելյան մի փոքրիկ զրույց: Մի աղքատ մարդ, թագավորի կյանքը փրկելու համար, թույլտվություն է ստանում՝ խնդրելու թագավորից որևէ շնորհ: Մարդն իրավունք է խնդրում մի գլխի վրա, գլխատել այդ տերության մեջ ապրող մի մարդու, միայն մի մարդու՝ իր ընտրությամբ: Ստանալով այդ իրավունքը, խորամանկ մարդը գոհ հեռանում է՝ մտադրություն անգամ չունենալով երբևէ օգտվել իր իրավունքից: Օգտվել՝ կնշանակեր կորցնել այն: Իսկ այդպես, առանց օգտվելու, նա սարսափի մեջ է պահում բոլորին, ձեռք է բերում հզորություն, հարստություն, և ապրում է երջանիկ:

Որքա՜ն լավ կլիներ՝ շրջել ողջ կյանքում՝ առանց մի որևէ մասնագիտություն ընտրած լինելու, ամեն բանի նկատմամբ պոտենցիալ կարողություն ունեցող մարդու հպարտ գիտակցությամբ, որ նա յուրաքանչյուր րոպե կարող է ընտրել, կարող է դառնալ իր ուզած բանը…

Բայց այն, ինչ հնարավոր էր հեքիաթի մեջ, անհնար էր կյանքում: Մի գլխի վրա ստացած իրավունքը կարելի էր գործադրել ուզած վայրկյանին, իսկույն կամ տարիներ հետո, կարելի էր նաև չգործադրել և դրանից օգտվել տարիներ շարունակ, հավասարապես: Իսկ մասնագիտություն ընտրելու համար հարկավոր էր երիտասարդ տարիք, հարկավոր էին չորս-հինգ տարիներ ինստիտուտում և այնուհետև հարկավոր էր ամբողջ կյանքը նվիրել դրան: Եթե չօգտվեիր քո իրավունքից, կգար մի պահ, երբ այլևս ուշ կլիներ: Եվ նա պոտենցիալ ամենակարողից կվերածվեր պոտենցիալ անկարողի:

Հասկանալու համար, թե ինչպիսի մեծ, ամենակուլ զգացում էր ագահությունը նրա մոտ, բավական է հիշատակել, որ նա ագահ էր ոչ միայն մասնագիտություն ընտրելու, այլև ամեն, ամեն ինչի նկատմամբ: Ո՞ր քաղաքում ապրել, միլիարդավոր մարդկանց մեջ ո՞ւմ ճանաչել, միլիոնավոր գրքերից որո՞նք կարդալ, անթիվ-անհամար աղջիկներից որի՞ն սիրել... Որի՞ն... Մի՞թե այդպիսի բառ կար նրա բառարանում: Բոլորովին:

Սեր... Այդպիսի բառ ևս չկար նրա բառարանում: Դա թույլ, անզոր բառ էր՝ նրա զգացումն արտահայտելու համար: Ոչ թե սեր, այլ ագահություն, անհագուրդ ագահություն: Նա երազում էր ապրել այն բոլոր զգացումները, որոնք կարող են տալ բոլոր տիպի կանայք, ավելի ճիշտ՝ կին հասկացողությունն իր բոլոր արտահայտություններով: Իսկ այնքան բազմազան էին այդ արտահայտությունները, այնքան տարբեր, իրարամերժ, որ գտնել այդ ամենը մի կնոջ մեջ՝ բացարձակապես անհնար էր:

Նա երազում էր և՛ մեղմաբարո, թախծոտ աչքերով, փխրակազմ, մի քիչ անօգնական և, իհարկե, նրա տղամարդկային հովանավորության կարիքն զգացող մի աղջկա, որին ծվարեր իր թևի տակ: Եվ նա երազում էր կենսախնդության առատությունից խելահեղորեն փարթամացած մի կնոջ՝ միջահասակ, լի մարմնով, որտեղ այնքան վայելք լիներ կուտակված սիրո արևի շարունակական ճառագայթումից:

Նա երազում էր հյուսիսի սպիտակ աղջիկներին՝ ոսկեգույն մազերով, կապույտ աչքերով, նրբակազմ, այնպե՛ս օդային: Նա երազում էր հարավի թուխ աղջիկներին՝ սև մազերով ու սև աչքերով, պինդ՝ ինչպես լերդացած մեղր:

Նա երազում էր մի աղջկա, որն անպատասխան սիրեր նրան, և այնպիսի աղջկա, որին ինքը սիրեր անպատասխան: Նա երազում էր կնոջ բոլոր երեք, մի կնոջ մեջ անհամատեղելի հրապույրները. կին՝ իրենից փոքր, իրեն հասակակից և իրենից մեծ…

Նա երազում էր իր ժողովրդի պատմական ճակատագիրը միասին կիսած հայուհու, և երազում էր մի օտար աղջկա, որի հետ լեզու անգամ չկարողանար թաթախել՝ սեր բացատրվելիս…

Կարելի՞ է թվարկել արդյոք կնոջ տիպերի և հրապույրների այն բազմազանությունը, որին բաղձում էր նա:

Մի ուրիշ մարդ, նրա փոխարեն, ճաշակելու համար իր այդ բազմազան զգացմունքները, իր կյանքը կվերածեր չնչին արկածների մի ողորմելի շարանի: Բայց նա շատ էր ագահ՝ այդպես մանրանալու համար: Նա շատ լավ գիտեր, որ որքան էլ երկար լիներ մարդու կյանքը և արկածներով հարուստ, միևնույնն էր, նա չպիտի կարողանար ունենալ մի կաթիլն անգամ այն օվկիանոսից, որը երազում էր: Եվ նա գիտեր, որ կանանց ոչ մի քանակ չէր կարող գոհացնել ոչ մի Դոն-Ժուանի կամ Կազանովայի, որովհետև — այդպես է այդ կրքի էությունը — նրանք հաշվում են ոչ թե այն, ինչ արդեն ունեցել են, այլ ինչ չեն ունեցել... «Ողորմելի պալիատիվ»,— մրմնջում էր նա իր մի քանի այն

ընկերների հասցեին, որոնք բռնել էին իրենց փոքրիկ ագահությունը գոհացնելու այդ անհույս ճանապարհը:

Իսկ նա չէր ուզում և չէր կարող թռչել ծաղկից-ծաղիկ: Իր բազմազան ճաշակներից, զգացմունքներից, ապրումներից յուրաքանչյուրը նա երազում էր վայելել ամբողջ կյանքում, նվիրվել դրան՝ առանց մնացորդի: Իր ագահության մեծ և գեղեցիկ զգացմունքից նա չէր սարքում կասկածելի հարուստ բովանդակությամբ լի կյանք, այլ պահում էր այդ ագահությունն իր մեջ՝ որպես անլուծելի, անհնար, բայց գեղեցկացնող, հարստացնող զգացում…

Կյանքում նրան սպառնում էր մի սարսափելի վտանգ ձգտելով ամեն ինչի, ձեռք չբերել ոչինչ. լցված լինելով բազմաթիվ և իրարամերժ բովանդակություններով, մնալ դատարկ…

Այն, որ հարկավոր է ամեն ինչում վերջիվերջո կատարել ընտրություն՝ նա համարում էր տխուր, բայց անխուսափելի անհրաժեշտություն: Եվ նա հստակ գիտակցությամբ ենթարկվում էր այդ անհրաժեշտությանը՝ տարբեր հարցերը լուծելով տարբեր կերպ:

Եթե հարցը վերաբերում էր ուտելիքին, ապա նա ուտում էր այն, ինչ որ պատահեր՝ առանց ընտրելու, գիտենալով, որ շատ կան ուտելիքներ և դրանք բոլորն ուտել չի կարելի, իսկ դրանց միջև հավետ տատանվելիս կմնաս սոված: Իհարկե, նա ուներ իր նախասիրությունները, նա, իհարկե, սպիտակ հացը չէր փոխի սևի հետ, բայց կյանքում ուրիշ այնքան լավ ու հետաքրքիր բաներ էին սպասում նրան, որ ուտելիքը նրա կյանքում չէր խաղում համարյա ոչ մի դեր: Նա մեծ ախորժակով, բայց առանց ինքնաբավ հաճույքի, որը հատուկ է բոլոր ժամանակների մեծ ու փոքր լուկուլլոսներին, ուտում էր որևէ բան և շտապում իր գործերին:

Բայց երբ հարցը վերաբերում էր մասնագիտություն ընտրելուն, ապա այդտեղ արդեն անհնար էր երկար չմտածել, հազար ու հազար անգամ իր ագահության անիրագործելի ցնորքներին չկառչել…

Կար ժամանակ, երբ նա երազում էր Լենարդո դա Վինչիի մասին, նրա համայնապարփակության, այն մարդու մասին, որ տիրապետում էր իր ժամանակի համարյա բոլոր արվեստներին ու գիտություններին, և այն էլ ինչպե՜ս էր տիրապետում… Նա անգիր գիտեր դա Վինչիի նամակն ինչ-որ դուքսի, որտեղ դա Վինչին, առաջարկելով նրա իր ծառայությունները, հայտարարում է իր ամենակարողության հպարտ գիտակցությամբ՝ ես կարող եմ անել այսինչ բանը՝ ինչպես ոչ ոք, ես կարող եմ անել այնինչ բանը՝ բոլոր մարդկանցից լավ…

Որքա՛ն երջանիկ պիտի լինի մարդը, որը լիակատար հիմք ունի ասելու այդպես: Մեզ՝ մահկանացուներիս, նրա խոսքերը կարող են թվալ գոռոզ: Բայց, անմահների լեզվով, դա փաստերի զուտ արձանագրական հիշատակություն է և ուրիշ ոչինչ:

Բայց Լեոնարդո դա Վինչին չի կարող այլևս կրկնվել երբեք, որովհետև մեր դարում այնքան են զարգացել գիտությունները, բազմազանացել, բարդացել, որ երջանիկ է այն մարդը, որը գտնվում է գոնե իր նեղ մասնագիտության գագաթի վրա...

Նա շատ էր մտածում մարդու ձևավորման ազատության մասին: Ծնվում է երեխան և ոչ ոք չգիտե, թե ինչ է դուրս գալու նրանից: Եվ չգիտե ոչ թե այն պատճառով, որ երեխան դեռ լեզու չունի և չի կարող ասել այդ մասին, այլ որովհետև նրա մեջ դեռ ոչինչ կամ համարյա ոչինչ չի դրված այդ հետագա «ինչ լինելու» համար:

Դա դրվելու է հետո: Իսկ ի՞նչ: Այդ արդեն՝ նայած, թե երբ և որտեղ է նա ծնվել, ինչ ընտանիքում է դաստիարակվել, ինչ միջավայրում, ինչ հասարակության մեջ: Լիակատար ազատ ընտրության

մասին, իհարկե, խոսք լինել չի կարող այստեղ: Դեռ երեխան չծնված, արդեն պատրաստի գոյություն ունեն այն պայմանները, որոնք ուղղություն են տալու նրա հետագա ամբողջ կյանքին: Իսկ երբ նա մեծանում և զարգանում է այնքան, որ ինքը ևս, իր հերթին, կարող է ազդել կամ ուղղություն տալ իր անձնական կյանքին և իր միջավայրի կյանքին, ապա պարզվում է, որ նա զգալի չափով արդեն կազմավորված է որպես մինչև իր ծնունդը գոյություն ունեցող միջավայրի արդյունք, և նրա հետագա բոլոր քայլերը պայմանավորված են դրանով:

Իհարկե, դա չի կաշկանդում նրան ճակատագրականորեն, շղթայի պես, բայց նրա կյանքն ու գործունեությունը դարձնում է մի շղթա, որը նա կարող է շարունակել կամ խզել, թողնել նույնը կամ փոփոխել, բայց մինչև իսկ խզելու կամ փոխելու դեպքում նա չէ՞ որ դարձյալ գործ ունի իր միջավայրի հետ և ոչ թե մի ուրիշ: Միայն թե, այս դեպքում, նրա կապը դրա հետ ուղղադարձ չէ, այլ հակադարձ:

Այսպես, քահանայի ընտանիքում ծնված երեխան կարող է դուրս գալ քահանա, բայց կարող է դուրս գալ նաև մոլի անաստված: Նրան հաճելի էր անաստվածը՝ ոչ միայն այն պատճառով, որ իրավացիությունը նրա կողմն էր, այլև նրա համար, որ նա ավտոմատիկորեն չէր շարունակել իր ընտանեկան միջավայրն ու տրադիցիան, այլ դուրս էր եկել դրա դեմ:

Նա սիրում էր Դյումա-հորը և արհամարհանքով էր մտածում Դյումա-որդու մասին: Նրա կարծիքով, հայրն իր մասնագիտությանը նվիրվել էր ազատ ընտրությամբ, կամովին, համաձայն իր հակումների, իսկ որդին՝ անկախ իր կամքից, իր ընտանիքի, իր հոր բերումով: Դյումա-հոր նկարիչ լինելու դեպքում Դյումա-որդին ևս պիտի դառնար նկարիչ, իսկ ֆինանսիստ լինելու դեպքում՝ ֆինանսիստ…

Եվ, ընդհակառակը, նա հիացմունքով էր կարդում կամ լսում այն մարդկանց մասին, որոնց հայրերը եղել էին տարբեր բնագավառի մարդիկ, քան նրանք իրենք, որոնց միջավայրը կարծես մտածել անգամ չէր տալիս, թե այդտեղ կարող էր ծնվել այդպիսի մի մարդ: Անկախություն, իր բախտի կռումն իր սեփական ձեռքով — ահա թե ինչն էր ամենահրապուրիչ բանը:

Նա գիտեր, որ որևէ ընտրություն կատարելուց հետո պիտի զղջար: Բայց այդ միտքը ետ չէր պահել նրան, որովհետև գիտակցում էր, որ զղջալու էր նաև մի երկրորդ, մի երրորդ, մի հազարերորդ մասնագիտություն ընտրելուց հետո նույնպես: Դա ագահ մարդու զղջում էր և գուցե զղջում էլ չէր, այլ մի ուրիշ բան, որն անուն չուներ: Չէ՞ որ զղջալ ընտրածի համար՝ նշանակում էր մտովին հրաժարվել դրանից: Բայց նա չէր հրաժարվում իր ընտրածից, այլ ափսոսում էր չընտրածների համար: Դա ագահություն էր, այդ էր դրա ճիշտ անունը:

Երբեմն նրան թվում էր, թե, այնուամենայնիվ, կյանքը կարելի է կրկնապատկել, եռապատկել: Դրա համար հարկավոր է քիչ քնել, քիչ դանդաղել, քիչ ուշանալ, քիչ ավելորդաբանել, շտապել, շտապել, շտապել... Այդ դեպքում հնարավոր կլինի զբաղվել գոնե մի կամ երկու ուրիշ բաներով ևս:

Հաջողվո՞ւմ էր նրան շտապել, շատ շտապել՝ դժվար էր ասել: Համենայն դեպս նրա գրադարակներում դրված էր նրա ամենասիրած գիրքը՝ վաթսուն հատորանոց հանրագիտարանը: Դրա մեջ ամփոփված էին բոլոր գիտություններն ու արվեստները, բոլոր իրերն ու երևույթները, բայց, ամեն ինչից մի-մի կաթիլ, այնքան, որքան, որ հարկավոր էր ոչ թե հագեցնելու, այլ միայն ծարավը բորբոքելու համար: Նա դառնությամբ էր հիշում Անատոլ Ֆրանսի հեգնական սրամտությունը՝ «ամենահաճելի ընթերցանությունը՝ դա կատալոգների ընթերցանությունն է»: Եվ հիշում էր Մոլլա Նասրէդդինի անեկդոտը — մոլլային հայտնում են, որ նրա սնդուկը գողացել են: «Ոչինչ,— ասում է նա,— բանալիս գրպանումս է»…

Կատալոգն ու բանալին մարդու համար, իրոք որ, կարող են դառնալ ամբողջ բովանդակության սիմվոլներ, ավելի շուտ՝ կարող են թվալ դրա կոնցենտրատը…

Նա սարսափում էր ընկնել կատալոգի ընթերցողի և բանալին ամուր պահողի ծիծաղելի վիճակի մեջ: Բայց մի կողմ նետել դրանք նա չէր կարող: Գիտակցելով հանդերձ դրանց սնամիջությունը, նա աշխատում էր ռեալ բովանդակություն տալ կատալոգին, բանալուն: Դրա համար նա հաճախ գրքեր էր ընտրում կատալոգից և կարդում, բաց էր անում սնդուկը բանալիով և իրերից օգտվում: Մի մարդու համար նա չափազանց շատ բան գիտեր, չափազանց շատ բան էր տեսել, ճաշակել, զգացել, նա չափազանց շատ բան ուներ և, թող սա չափազանցություն չթվա, շատ ավելի մի բան էր, քան սովորական մի մարդ...

Մասնագիտություն ընտրելուց հետո իր կյանքի մյուս կարևոր հարցը՝ ընկերուհի գտնելը, նա դեռ չէր լուծել և չգիտեր էլ, թե լուծելո՞ւ է երբևէ: Այստեղ ևս, նրա հանդեպ կանգնում էին նույն դժվարությունները, որոնք կանգնել էին մասնագիտություն ընտրելիս, բայց շատ ավելի ուժեղ, սուր ու հիվանդագին:

Չպետք է կարծել, սակայն, թե նա դատողությամբ էր մոտենում սիրո հարցին, դատողության մեջ խեղդում էր զգացմունքը: Դա նման չէր նրան: Նա հաճույքով, իր զգացմունքների հախուռնության երջանիկ գիտակցությամբ էր ամեն անգամ հանձնվում իր զգացմունքների հեղեղին՝ հաճախ ոչ միայն հակառակ իր գիտակցությանն ու դատողությանը, այլև դրանցից բոլորովին անկախ: Դատողականությունը գալիս էր հետո միայն, գալիս էր այն ժամանակ, երբ զգացմունքներն արդեն տիրապետել էին նրան: Եվ քանի որ նա միշտ, վերջիվերջո, լսում էր իր դատողության ձայնը, ուստի ամեն անգամ հարկ էր լինում ցավով, արյունով պոկվել իր զգացմունքներից, որովհետև նրա զգացմունքները միշտ հակառակ էին լինում դատողությանը՝ այն պարզ պատճառով, որ յուրաքանչյուր զգացմունք մասնակի էր, իսկ նա ուզում էր ապրել մի ինչ-որ համայնապարփակ զգացմունք, ավելի ճիշտ՝ ապրել բոլոր զգացմունքները միասին: Ուստի և, դրանցից յուրաքանչյուրի վրա ծախսած իր ժամանակն ու եռանդը նա համարում էր անտեղի կորուստ:

Շատ հաճախ նրա դատողությունը բողոքում էր նաև մի այլ պատճառով, գտնելով ընտրության մեջ սեփական կամքի բացակայություն: Կապիր կողք-կողքի, հարևան մսուրների մոտ, երկու անասուններ, և նրանք կվարժվեն իրար, որովհետև, պատահականության բերումով այդ նրանք են կապված իրար մոտ և ոչ թե ուրիշները: Այլ կերպ ասած, նրանց մտերմությունը կանխորոշվել և սահմանափակվել է ուրիշների կողմից, ազատ ընտրության մասին խոսք անգամ չի կարող լինել այստեղ:

Իսկ մարդը, վերջապես, պե՞տք է տարբերվի անասունից, թե ոչ: Պե՞տք է ինքը որոնի կյանքում իր ընկերուհուն, ինքը գտնի: Գուցե նա ապրում է յոթը սարի ետևո՞ւմ…

Նա վատ թաքցրած արհամարհանքով էր նայում այն մարդկանց, ովքեր սիրահարվում կամ ամուսնանում էին իրենց հիմնարկի աշխատակցուհու, իրենց կուրսի ուսանողուհու, իրենց հարևան աղջկա հետ: Իզուր էր նա ճգնում համոզել իրեն, որ սրտերն իրար գտնում են համատեղ աշխատանքի ու պայքարի մեջ: Նա միայն թռիչքի բացակայություն էր տեսնում այդտեղ: Սիրել նրան, ով առկա է: Իսկ եթե ուրի՞շը լիներ առկա: Ուրեմն նա՞ էր դառնալու քո «միակը», քո «անփոխարինելին»…

Եվս մի քիչ, և նա կսկսեր հավատալ, թե յուրաքանչյուր երիտասարդի համար աշխարհիս երեսին կա միայն մի «միակ աղջիկ», որը գտնվում է ո՛վ գիտե որտեղ, և որին պետք է փնտրես, բայց որին կարող ես և չգտնել կյանքում երբեք…

Նա ուրախանում էր՝ տեսնելով, որ այդ ռոմանտիկան հատուկ է ոչ միայն նրան: Նրա ինստիտուտի համարյա բոլոր ուսանողներն ու ուսանողուհիները սիրահարված էին ուրիշ ինստիտուտների տղաների և աղջիկների: Յուրայիններին նրանք չէ թե չէին նկատում, այլ համարում էին քրոջ կամ եղբոր նման սովորական, ընտանի…

Իսկ ինչո՞ւ էր այդպես: Մի՞թե վատերն էին նրանց ինստիտուտի տղաներն ու աղջիկները: Չէ՞ որ նրանց վրա, իրենց հերթին, սիրահարվում էին ուրիշ ինստիտուտներում սովորողները:

Հենց ամենախրթինն այն էր, որ վատը չէին, ունեին ճիշտ նույն արժանիքներն ու բարեմասնությունները ինչպես ուրիշները: Բայց մի՞թե սիրելու համար բավական են արժանիքներն ու բարեմասնությունները: Այդ դեպքում չի կարող գոյություն ունենալ որևէ սեր, քանի որ արժանիքներով լի տղաներ և աղջիկներ ամեն տեղ կան, հետևաբար և, կարելի է սիրահարվել առաջին իսկ պատահածին:

Այստեղ կա մի ինչ-որ՝ եթե ոչ անբացատրելի հանելուկ, ապա գոնե մի այնպիսի դեռ չհասկացված բան, հոգեբանական հիմք, որը հազար լավերի միջից ընտրում է հազարումեկերորդին, գուցե և ոչ ամենալավին…

Ի դեպ, անպտուղ բան կլինի փնտրել, թե ինչն է դա, որովհետև, միևնույնն է, մեխանիզմը գտնելուց հետո ևս, դու քո սիրեցյալին գտնելու ես ոչ թե ընտրությամբ ու դատողությամբ, այլ՝ զգացմունքներով ու պատահականորեն:

Պատահականություն... Թվում է, թե այստեղ պիտի ավարտվեին նրա մտատանջություններն ու կասկածները: Թվում է, թե պատահականությունը հիանալի ապացույց է, որ երիտասարդն ընտրում է ազատորեն: Եվ նա կարող է գոհ լինել: Սակայն, ավաղ, այդպես չէր: Նրա գլխավոր տառապանքներն սկսվում էին հենց պատահականության առջև.…

Մի անգամ նա մի գործով գնաց տպարաններից մեկը: Դա մի այնպիսի գործ էր, որ կարող էր վերաբերել որևէ տպարանի, ուստի և նա մի պահ մտածեց՝ ա՞յս տպարանը գնալ, թե՞ այն: Վերջապես, ընտրեց և գնաց: Երբ անցնում էր ցեխերից մեկով, այնտեղ տեսավ մի արտակարգ գեղեցկուհի բանվորուհու և կանգ առավ կայծակնահարի պես: Այդպես է սկսվում սերը սովորաբար: Բայց նա... Բայց նա մտածեց.— «Իսկ եթե ես գնայի մի ուրի՞շ տպարան, իսկ եթե այս աղջիկն աշխատեր ուրի՞շ հերթափոխության ժամանակ և այսօր բացակայե՞ր»…

Գերմարդկային ճիգ գործադրելով իր վրա, նա անցավ աղջկա մոտով, որը նույնպես, այնքան տրամադիր նայում էր նրան... Գուցե իր բախտի, իր երջանկության կողքո՞վ էր նա անցնում անվերադարձ…

Իսկ գիշերը, գլուխը վերմակի տակ առած, նա տանջվում էր և անասելի մրմնջում իր հասցեին.— «Ագահ, ագահ, ի՞նչ ես ուզում վերջապես, ինչո՞ւ չես կարող լինել՝ ինչպես բոլոր մարդիկ»…

Կարող էր թվալ, թե նա տառապում էր իր ագահությունից: Ոչ, ոչ, բոլորովին հակառակը: Այսինքն, այո, իհարկե, նա տառապում էր, բայց բոլոր մարդկանց հատուկ տառապանքով: Իսկ իրեն, միայն իրեն հատուկ գոհունակությամբ նա գոհ էր իր անկշտությունից, և եթե կար կյանքում մի բան, որը նա վայելում էր լիուլի, ագահորեն, դա նրա ագահությունն էր հենց:

Ուրիշ հագեցում նա չուներ: Ըստ երևույթին, ագահությունն ու հագուրդը կյանքում ծնվել են առանձին-առանձին, և չեն կարող հանդիպել երբեք, ոչ ոքի մոտ…

1957